Հաստատում եմ տնօրեն Վ. Առաքելյան

Համաձայնեցված է՝ Ն. Սարգսյան

ՀՀ Սյունիքի մարզ Նորավանի միջն. դպրոց 2023-2024 ուստարվա II դասարանի դասվարի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորում

Դասվար՝ Բ. Բաղդագուլյան

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը) II դասարանում սովորում են 8 աշակերտ՝ 5 տղա, 3 աղջիկ: Դասարանը գեղեցիկ և համախմբված է:Սովորում են բավականին ակտիվ և խելացի աշակերտներ, սակայն ոչ բոլորն են ցուցաբերում են լավ վարքագիծ:Դասապրոցեսին շպասիվություն է ցուցաբերում Քարամյան Արմենը:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում- ներկայացվում է միջոցառումների օրացույցային պլանի աղյուսակ: Պետք է իրականացվի հայեցի, գեղագիտական, բարոյական, հայրենասիրական, սպորտային, քաղաքացիական դաստիարակությանը նպատակաուղղված միջոցառումներ, բաց դասեր, սպորտլանդիաներ, էքսկուրսիաներ, աշակերտների հայացքների, մոտեցումների բացահայտման ուղղությամբ քայլեր: Կարևորագույն միջոցը դասապրոցեսնէ, որի ընթացքում երեխաներին տրվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ,

3.Հանրակրթական պետական չափորոշիչ

2023-2024ուստարում 2րդ դասարանի աշակերտների ուսումնառությունը կազմակերպվում է նոր չափորոշիչով:

Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը:

2-րդ դասարանում գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով:

Գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի: Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր:

4.Հայեցի դաստիարակություն

4.1-Հոգևոր դաստիարակությունը սկսվում է հայրենիքի հանդեպ սիրուց: Հայրենիքը սկսվում է տնից,հողից, ջրից: Հայեցի դաստիարակություն նշանակում է սիրել հայոց լեզուն, մեր ավանդույթներն ու սովորույթները, երգն ու պարը, մշակույթը, ազգային նվաճումները, հայտնագործությունները:

4.2- Գեղագիտական դաստիարակությունը մանկավարժների և դաստիարակողի համատեղ գործունեության գործընթաց է, որը ձևավորում է գեղագիտական կուլտուրա: Գեղագիտականդաստիարակության զարգացմանը մեծապես նպաստում են արվեստի օջախներ այցելելը, էքսկուրսիաները և այլն:

4.3-Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն. Հայրենասիրությունը դա սերն է հայրենիքի,սեփական երկրի նկատմամբ: Դա հոգատարությունն է հայրենիքի հանդեպ և հանուն հայրենիքի սեփական անձի զոհողությունն է: Պետք է հարգել և սիրել մեր հայրենիքը:

4.4- Ֆիզիկական դաստիարակությունը ուղղված է սովորողների օրգանիզմի ձևաբանական և ֆունկցիոնալ կատարելագործմանը, արտաքին միջավայրի անբարենպաստ պայմանների դեմկայունության ձևավորմանը, հիվանդությունները կանխելուն և առողջության պահպանմանը:

4.5-Աշխատանքային դաստիարակություն նշանակում է զուգակցել սովորողների մտավոր և ֆիզիկականաշխատանքի ձևերը: Այդ իսկ պատճառով պետք է անընդհատ հարստացնել և համալրել նրանց աշխատանքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները:

4.6-Բնապահպանական դաստիարակություն. Նպատակը շրջապատող միջավայրի նկատմամբ դպրոցականների պատասխանատվության ձևավորումն է: Պետք է անձի մեջ դաստիարակել, որբնությունը ազգային հասարակական հարստություն է, որը պետք է պահել խնամքով:

5.Դպրոց-ընտանիք կապը-ձևավորվում է ծնողների և մանկավարժների համատեղ գործունեությունից:Այդհամատեղ գործունեությունը նախատեսում է երեխայի հանդեպ միասնական պահանջների մշակում: Ծնողներին պետք է ներգրավել դպրոցական աշխատանքների կատարմանն ու կազմակերպմանը:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամանակ	Բովանդակություն	Կատարող
1	Գիտելիքի օր	01.09.2023թ.	Գաղափար տալ գիտելիքի կարևորության, դերի և նշանակության մասին:Կարողանալ աշակերտների մեջ սերմանել մեծ սեր ու հավատ դեպի գիրն ու գրականությունը:	դասվար
2	Առողջ ապրելակերպի կանոնները	08.09.2023թ.	Խոսել առողջ ապրելակերպի կարևորության մասին և ի՞նչ է դա նշանակում:Թվարկել և քննարկել առողջ	դասվար
			ապրելակերպի 4 հիմնական կանոնները:	
3	Աշնան գույները: Բնությունն աշնանը:	15.09.2023թ.	Խոսել տարվա եղանակներիմասին: Դրանցից առանձնացնել աշունը:Նկարել աշունը:	դասվար
4	Իմ անկախ հայրենիք	22.09.2023թ.	Ներկայացնել մեր հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունը: Ներկայացնել խորհրդանիշները՝ զինանշանը, դրոշը, օրհներգը: Զնավորել նրանց մեջ անսահման սեր, ջերմություն,հավատ հայրենիքի նկատմամբ, կատաղի պայքար հանուն հայրենիքի:	դասվար

5	Լավ ընկեր	29.09.2023թ.	Խոսել լավ ընկերոջ հատկանիշների մասին և ներկայացնել առանձին-առանձին: Այնուհետև յուրաքանչյուրին հանձնարարել ներկայացնելիր լավագույն ընկերոջը դրական և բացասական հատկանիշներով:	դասվար
6	Զրույց հանդուրժողական ությանմասին	06.10.2023թ.	Խոսել հանդուրժողական ության մասին:	դասվար
7	Իմ սիրած հեքիաթը	13.10.2023թ.	Յուրաքանչյուր աշակերտ ներկայացնում է իր սիրած հեքիաթը,նկարագ րում հերոսներին:	դասվար
8	Խոսենք ճիշտ և գրագետ	20.10.2023թ.	Բերել ճիշտ և գրագետ խոսելու օրինակներ:	դասվար
9	Բնական աղետներ	03.11.2023թ.	Քննարկել Ի՞նչ է բնական աղետը: Թվել պատճառները և աղետիտեսակները:	դասվար
10	Ի՞նչ է երկրաշարժը	10.11.2023թ.	Ինչպե՞ս պաշտպանվել երկրաշարժից: Դիտել հաղորդաշա ր երկրաշարժի մասին:	դասվար
11	«Ես բարեկիրթ եմ » թեմայով զրույց և քննարկում	17.11.2023թ.	Խոսել վարվեցողության կանոններից	դասվար
12	Իմ անվանակից հայտնիները	24.11.2023թ.	Բերել և ներկայացնել իրենց	դասվար

			անվանակակից հայտնիներիմասին տեղեկություն	
13	Ի՞նչ պետք է անենք , որչհիվանդանանք	01.12.2023թ.	Ինչ պետք է անել ,որպեսզի չհիվանդանանք(մարզվել,վի տամիններով հարուստ ուտելիքներ ուտել,զբոսնել:) Ինչի՞ց զգուշանալ	դասվար
14	Ընտանիքում ամեն մեկն իրգործն ունի	08.12.2023թ.	Նկարագրել ընտանիքը Շարադրություն «Իմ ընտանիքը»	դասվար
15	Ի՞նչն է լավ,ինչը՝ վատ	15.12.2023թ.	Թվարկել լավ և վատ արարքներ :Քննարկել	դասվար
16	Նոր տարի: Հեքիաթի բեմականացում	22.12.2023թ.	Միջոցառմանը ներկայացնել գեղեցիկ բեմականացում	դասվար
17	Հայոց բանակի օր	26.01.2024թ	Ե՞րբ է նշվում Հայոց բանակիօրը: Խոսել հայկական տոնացույցի ամենահպարտ օրվա մասին :	դասվար
18	Ճանապարհային երթևեկության կանոնները	02.02.2024թ	Երթևեկության կանոններիմասին գիտելիքների ամփոփում:Վերհիշել խաչմերուկների և դրանց ճիշտ անցկացման ,հետիոտնային անցումները,դրանցից օգտվելու կանոններն ու ձևերը: Վերհիշել լուսակրի կարևորությունը և օգտագործման ձևերը:	դասվար
19	Ինչպիսի՞ ընկեր եմ ես	09.02.2024թ	Ի՞նչ է քո համար ընկերությունը: Ընկերը պետք է լինի… Ինչպիսի՞ ընկեր եմ ես	դասվար
20	Ի՞նչ են սովորեցնում Թումանյանի հեքիաթները Թումանյանական շաբաթ	16.02.2024թ	Ի՞նչ հեքիաթագրերի անուններ գիտեն: Ի՞նչ հեքիաթներ գիտեն: Խոսել Թումանյանի մասին ներա հեքիքթներից ինչ են սովորում	դասվար

21	Կարելի է և չի կարելի	23.02.2024թ	Т-- աձև մեթոդով ներկայացնել «Կարելիներն ու չի կարելիները»	դասվար
22	«Դռները բա՛ցեք գարուն է գալիս»:Գարնա և առաջինօր	01.03.2024թ	Դասասենյակի ձևավոնում,գարնանային տրամադրություն	դասվար
23	«Ինչ նվիրել մայրիկին»:	07.03.2024թ	Տեղեկություն տոնի մասին «Մարտի 8 »: «Երգ մայրիկիս » երգի ուսուցում, պաստառի պատրաստում:	դասվար
24	Ով աշխատի,նա կուտի	15.03.2024թ	Ընթերցել «Ով աշխատի,նակուտի» հեքիաթը;	դասվար

			Բեմականացնել	
25	Կարդացած հեքիաթների նկարագրություններ	22.03.2024թ	Ընթերցել հեքիաթներ: Կարդացած հեքիաթը նկարագրել:	դասվար
26	Մուլտֆիլմի իմ սիրած հերոսը	05.04.2024թ	Մտագրոհ մեթոդով ներկայացնել թեման:Նկարագրել նախընտրելի մուլտֆիլմի հերոսին կամ հերոսներին:	դասվար
27	Տղաների և աղջիկների տարբերվարքագծերի առանձնահատկությունները	12.04.2024թ	T-աձև մեթոդով առանձնացնել տղաների նաղջիկների տարբեր վարքագծերի առանձնահատկությունն երը,քննարկել:	դասվար
28	Ճանապարհային նշաններ	19.04.2024թ	Մտագրոհ մեթոդով ներկայացնել թեման: Առանձին –առանձին ներկայացնել ճանապարհային նշաններ	դասվար
29	Հայաստանի խորհրդանիշները	26.04.2024թ	Մտագրոհ մեթոդով ներկայացնել թեման: Առանձին –առանձին ներկայացնել Հայաստանի խորհրդանիշները	դասվար
30	Հայաստանն իմ աչքերով	03.05.2024թ	Խոսել Հայստանի մասին: Գրել«Հայաստանն իմ աչքերով» (շարադրություն)	դասվար
31	Անվտանգ երթևեկություն	10.05.2024թ	Քննարկում,ամփոփում:	դասվար
3 2	Ինչ կլինի,եթե մի օր բոլորըհրաժարվեն աշխատելուց	17.05.2024թ	Հարց-պատասխան	դասվար